ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ՝ ՆՎԻՐՎԱԾ ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ԾՆՆԴՅԱՆ 1500-ԱՄՅԱԿԻՆ

Մայիսի 16-ին Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ հայ մեծանուն փիլիսոփա Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ։

Նախագահությունում էին ընկ. ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, Բ. Ե. Սարկիսովը, Ֆ. Տ. Սարգսյանը, Գ. Ն. Անդրեևը, Կ. Լ. Դալլաքյանը, Վ. Բ. Ղալումյանը, Լ. Ն. Ներսիսյանը, Մ. Հ. Մուրադյանը, Լ. Ս. Շուստկոն, *Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ* Հ. Մ. Բաղդասարյանը, *Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալներ* Ա. Մ. Կիրակոսյանը, Ս. Լ. Թումանյանը, Կ. Հ. Ղամբարյանը, Վ. Մ. Մովսիսյանը, Հ. Ս. Սաղոյանը, Ռ. Ք. Ավետովան, *համամիութենական հոբելյանական կոմիտեի նախագահ, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ, ակադեմիկոս* Պ. Ն. Ֆեդոսեևը, *Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս* Վ. Հ. Համբարձումյանը, *ՌՍՖՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստր, ակադեմիկոս* Ի. Ֆ. Օբրազցովը, *գիտության, մշակույթի գործիչներ, կուսակցական, սովետական ղեկավար աշխատողներ, եղբայրական հանրապետությունների պատվիրակությունների ղեկավարներ, արտասահմանյան հյուրեր։*

Հանդիսավոր նիստը բացեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ, հանրապետական հոբելյանական հանձնաժողովի նախագահ Ֆ. Տ. Սարգսյանը:

Այսօր, մասնավորապես ասաց նա, հայ ժողովուրդը, մեր հայրենիքի ժողովուրդները, արտասահմանի մեր բարեկամները խորին երախտագիտության տուրք են մատուցում մեր ժողովրդի ականավոր զավակներից մեկի՝ մեծահմուտ գիտնական-փիլիսոփա Դավիթ Անհաղթի հիշատակին՝ նրա ծննդյան 1500-ամյակի առթիվ։

Մեծ է Դավիթ Անհաղթի երախտիքը մեր ժողովրդին։ Նա մեր անցյալի այն մեծերից է, որոնք նախանձախնդիր կերպով կանգնած էին հայ ազգային մշակույթի ստեղծման ու ձևավորման ակունքների մոտ և իրենց տաղանդով ու հայրենանվեր գործունեությամբ վիթխարի դեր խաղացին մեր ժողովրդի պատմական ճակատագրում, Հայաստանում գիտական մտքի հաստատման ու հետագա զարգացման գործում։

Ֆ. Տ. *Սարգսյանը այնուհետև ներկայացրեց հոբելյանական հանդիսություններին մասնակցելու եկած եղբայրական հանրապետությունների պատվիրակություններին, արտասահմանյան հյուրերին, ապա Սովետական Հայաստանի աշխատավորների անունից ջերմորեն ողջունեց և հաջողություններ մաղթեց նրանց։*

Դավիթ Անհաղթի մասին զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնակատար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Բրուտյանը: *Խոսելով Դավիթ Անհաղթի տեսական ժառանգության, գիտելիքների տարբեր բնագավառների վերաբերյալ նրա արտահայտած գաղափարների մասին, զեկուցողն այնուհետև հանգամանորեն կանգ առավ մեծ մտածողի տրամաբանական ուսմունքի վրա, նշելով, որ այն կազմում է Դավիթ Անհաղթի տեսական ժառանգության գլխավոր բովանդակությունը։*

Նիստում ելույթ ունեցան ակադեմիկոսներ Պ. Ն. Ֆեդոսեևը, Ի. Ֆ. Օբրազցովը, *Ուկրաինական ՍՍՀ ԳԱ փիլիսոփայության ինստիտուտի դիրեկտոր* Վ. Ի. Շինկարուկը, *Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ* Ե. Կ. Խարաձեն, *փիլիսոփայական ընկերությունների համաշխարհային ֆեդերացիայի պրեզիդենտ* Ա. Դիմերը *(ԳՖՀ), միջնադարյան փիլիսոփայության ուսումնասիրման միջազգային ընկերության փոխպրեզիդենտ* Ջ. Կուկսեվիչը *(Լեհաստան), Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի նախագահության անդամ* Ս. Անգելովը:

Հանդիսավոր նիստի վերջում Ֆ. Տ. Սարգսյանը *նիստի մասնակիցների, Սովետական Հայաստանի բոլոր աշխատավորների անունից երախտագիտության խոսք ուղղեց մեր լենինյան կուսակցությանը, նրա Կենտրոնական կոմիտեին, անձամբ ընկեր Լեոնիդ Իլյիչ Բրեժնևին՝ հայ ժողովրդի մշակույթի նկատմամբ ցուցաբերած խոր հոգատարության համար։*